



ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՒ 108

16 ՕԴՈՍՏՈՍ 1913

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՈՆԱԿԱՆՆԷ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԱՆԹԱՆԵՐԹ

Երրորդ տարի 16 Օգոստոս 1913 Թիւ 108

«Մերական Բանաստեղծական Պիոս Ժ. կը մաղթէ որ Կաթողիկէ Արձագանգ շաբաթաբերքը շարունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կատարել, ի բարգաւաճման կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար Մերական Հայրն արագին կ'օրհնէ յիշեալ Շաբաթաբերքը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Նամակ կարգ. Մէրի Տէլ Վալի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս Ժ.Գ. Թեղեան, Հայ Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիո 23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 բուսնամարտ:

ԴԵՊՔԵՐ ԵՒ ՍԿՋՐՈՒՆՔՆԵՐ

ԱՆԻՐԱՒԱՆ ԽԾՐԾԱՆԵՐ

(Շար. եւ վերջ)

Կ'առարկեն ուրեմն թէ. Խնչու լատինա-
ծէս քահանայ մը Ս. Կրթութիւնները քա-
րողեց Հայ Կաթողիկէ Կղերին:

— Նախ և առաջ սակայն գերազանցա-
պէս կարեւոր է հարցնել այս անձնամաստոյց
առարկուններու թէ՛ այս կծու և անպատ-
ուարեք քննադատութիւնը ո՞ր Հայութեան,
ո՞ր Հայ Եկեղեցւոյ անունով կ'ընեն. ո՞ր այն
հեղինակութիւն է՝ որոյ իբր ներկայացուցիչ
չարաչար կը դարձուն լատինածէս եկեղեցա-
կանի մը Ս. Կրթութիւն քարողելը Հայ Կա-
թողիկէ Կղերին: Այս կէտին ճշդութիւնն ու այս

հարցման պատասխանը աւագ կարեւորու-
թիւն ունի խնդրոյն միանգամ ընդ միշտ ար-
մատական լուծումին համար:

Բանդի երկու կերպով կրնայ ուղղուիլ
այդ խնդրանքը. 1. Իբրեւ էջմիածնական ե-
կեղեցւոյ պատկանողի մը կողմանէ. 2. Իբր
Հայ Կաթողիկէ հասարակութեան անդամի մը
կողմանէ: Ստէպ այս երկու տեսութիւններն
կը շփոթուին ազգասիրութիւն, ազգային ծես,
Հայաստանեայց եկեղեցի ևն. բառերով եւ
անունց երկդիմի իմաստովը. վերլուծենք:

1. Եթէ հարցումը առաջին տեսակէտով
կ'ուղղուի, մենք չենք ուզեր և ոչ իսկ տալ
ուղղակի պատասխան մը: Նախ որովհետեւ
հայ էջմիածնականք բնաւ իրաւունք չունին
մեր գործառնութիւնները խնդրելու, քանի
որ իրենք մեզի դէմ կանխակալ կարծիքնե-
րով պաշարուած են, պործերնին՝ կրօնական
տեսակէտով, զմեզ նախատել է. գեռ վեր-

ջերս, Ծ. Վ. մը իրենց կրօնական թերթին մէջ սա տողերը կը ստորագրէր. «Աղթարմայ կը յորջորջուէին լատինամուլ (ըսել կ'ուզէ Կաթողիկէ) Հայերը, իրենց մայրենի եկեղեցիէն լատինականութեան (այսինքն Կաթողիկէութեան) անցնելուն համար, կամ Աղթարհերու (մոգ, կախարդ) չափ զգուշի ըլլալուն պատճառաւ» (Տաճար 1913, 29 Յունիս, Թ. 18. էջ 354)։ Ուստի լսեցի՞ք... միայն ու միշտ իրենց տեսակէտէն կը դատեն զմեզ, և հետեւաբար բնաւ ուղիղ դատաստան չեն ընեն։ Միտային մէկ կողմը միայն կը տեսնեն։ — Այնուհետեւ մենք գիրենք չենք ճանչնար բնաւ — քանզի բնաւ չեն — օրինաւոր հեղինակութիւն մը, ճշմարիտ եկեղեցի մը. անոնք, — քանի որ մեր Ուղղափառ Հարց դաւանութիւնը կը մերժեն և անկախ եկեղեցի մը կը քարոզեն, — անոնք չեն ու չեն կրնար ըլլալ Հայաստանեայց ճշմարիտ Ուղղափառ Եկեղեցին, որ իրաւունք կ'ունենայ այդ տեսակ նախանձախնդիր պրպտումներ ընելու։ Անոնք, քանի որ Բրիտտոսի ճշմարիտ ու միակ եկեղեցիէն բաժնուած են, կը յանդգնին հաւաքաբար և յամենայնի դատապարտել զմեզ, անոր համար միայն՝ որ Կաթողիկէ ենք, որ՝ Հռոմայ Ս. Աթոռը կը ճանչնանք գերադոյն դատաւոր անսխալ։ Ուստի ի՞նչ արժէք կ'ունենայ իրենց առարկութիւնը երբ մանրամասնութեան մը համար մեղադրեն զմեզ։ Ասոնցմէ զատ պէտք է գիտել թէ անոնք որ և իցէ այս տեսակ հակաճառութեան մէջ մտնելու հեղինակութիւն չունին՝ նաև անոր համար ալ որ՝ իրենք աստուածաբանութիւն չունին, ո՛չ իբրեւ գիտութիւն, ո՛չ իբրեւ անսխալ վճռող աղբիւր։ և ո՛ւշ դրէք, կ'աղաչեմ, որ՝ գիտութիւն բառը հոս նիւթապէս չենք առնուր, իբրեւ թէ ըսել ուզէինք թէ էջմիածնական եկեղեցականները սրբազան գիտութիւն չեն սորվիր, գիտուն չեն, բան մը՝ որ շատ ցանցաւ բայառութիւնները յարգելով, ստոյգ է և ամէնուն ծանօթ. այլ կ'ուզենք ըսել իբրեւ սկզբունք, անոնք վերջնաբար վճռուած և գերադոյն իշխանութենէ սահմանուած վարդապետութեան մատենանը, օրինադիրքը չու-

նին. այլ վարկաբարակի, ցանուցիր, մակերեւութային, մասնակի փշրանք միայն. առանց ընդհանուր մէթոտի, առանց խոր ուսումնասիրութեան, առանց վճռատու հեղինակութեան։ Իսկ ու կրակ բան մը։ Այսամանդեայ մանեակը խորտակուած է. գոհարները ցանուցիր. զօդող ոսկի թելը կարտուած. չկայ այն հեղինակութիւնը որ իրարու կապէ, միացնէ այդ գոհարները, մարդարիտները՝ վարդապետութեան։ Չունին անոնք անսխալ վճռական հեղինակութիւն մը. վարդապետութիւնը (dogme) կախում ունի վարդապետներու և եպիսկոպոսներու քմահաճոյքէն, յանդգնութենէն, խառնուածքէն, պատեհապաշտութենէն, արտաքին ո և է անճաշ աղեցնութենէն. կրօնքի վարդապետութիւն կը գրեն՝ մին միւսին հակասական, նոյն իսկ իրենց եկեղեցւոյն հնադարեան ճշմարտութիւնները կ'ուրանան հրապարակաւ և յանպատիժս։ Աւետարանը կը խանդարեն. և չկայ իշխանութիւն մը որ վճռէ կամ դատապարտէ։ Ինչ որ ունին նիւթական է, նիւթականին կապուած են, արտաքինը միայն պահած են, և անով կը պարծին. և զայն միայն կ'անուանեն Հայաստանեայց Եկեղեցի։ Աւաղելի՛ մոլորութիւն։ Ինչ իրաւունքով ուրեմն ատոնք պիտի խժբժեն զմեզ։

Եւ ի՞նչ իրաւունքով պիտի խժբժեն զմեզ ատոնք, որ կը դաւանին լացարձակ անխրատականութիւն, որ կը հաղորդակցին ամէն տեսակ աղանդաւորաց հետ, ըլլայ Բողոքական, ըլլայ Յոյն, ևն... Թէեւ ատոնք զիրենք հերեթիկոս իսկ անուանեն... Իրենք չեն որ իրենց եկեղեցիներուն մէջ թոյլ կու տան քարոզելու, Յոյներու, Բողոքականներու... և իրենք կը փոխադարձեն նոյնը, և մինչեւ իսկ հոգոց կը կարդան — պաշտօնապէս — նաև այլազգեաց դամբաններուն վրայ։ Իրենք աշխարհականացուցած են իրենց՝ եկեղեցի յորջորջած անկենդան մարմինը։ Ասոնք են ուրեմն որ իրաւունք պիտի ունենան — և յանուն Հայաստանեայց Եկեղեցւոյ! — մեզ յանցանք վերագրելու՝ անոր համար որ մեզի կրօնակից լատին կաթողիկէ քահանայ մը մեզ քարոզէր է եղեր...

Օրն անդր, ի բաց տա՛ր այդ տեսակ ան-
ճոռնի յաւակնութիւնը:

2. Իսկ եթէ քննադատութիւնը կ'ըլլայ
Հայ Կաթողիկէներու կողմանէ, ատիկա կը
կազմէ շատ աւելի մեծ սխալ մը:

Քանզի ո՞ր այն Հայաստանեայց Եկեղեցին
է՝ որոյ անունով կը քննադատեն. Կաթողիկէ
Եկեղեցին մէկ հատ է, որուն Գլուխն է Ս.
Քահանայապետը: Ուրեմն եթէ ա'ս ու ա'ն
պիտի կարենայ քննադատել, ի՞նչ տարբե-
րութիւն կը մնայ Կաթողիկէ և Էջմիածնա-
կան Եկեղեցիին մէջ, ճշմարտին ու սուտին
մէջ: Ստոյգ է որ ծէսերը տարբեր են: Սա-
կայն պէտք է քաջ դիտել որ ծէսերու պա-
հապանը Ս. Քահանայապետն է միայն, և ոչ
թէ այս ինչ կամ այն ինչ Կաթողիկէ անհա-
տը: Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ մէջ հայկա-
կան ուղղափառ ծէսը բնաւ չպիտի փոխուի
անոր համար միայն՝ որովհետեւ անոր հրա-
մայոյն ու պահապանը Քրիստոսի անսխալ
փոխանորդն է: Հայ Էջմիածնական Եկեղեցին
նոյն իսկ Քրիստոսի վարդապետութիւնը կը
փոխէ ըստ քմաց. և կուսակցական անկրօ-
նութիւնը նոյն իսկ այդ Եկեղեցւոյն մէջ իշ-
խելով անոր հիմը քանդելու կը ձգտի կոր,
ո՛ւր մնայ ուրեմն ծէսը, արարողութիւնը,
որպիսի՞ կործանարար ձեռքերէ կը սպասէք
չինութիւն կամ սոսկ պահպանում!... Պէտք
է մեծ ուշադրութիւն դարձնել այս կէտին
վրայ: Որովհետեւ մեր մէջ ալ կ'ուզուէր —
անզգուշարար կամ չարամտութեամբ — ծէ-
սերու անաղարտ կատարման դատաւոր և
հսկող կացուցանել թաղական խորհուրդները!

Արդ, մենք, Կաթողիկէայքս, միակ պա-
հապանք հայկական ուղղափառ ծէսի, կը հար-
ցնենք. ո՞ր ծէսի, ո՞ր արարողութեան հա-
կառակ է եղեր լատին քահանայի մը քարո-
զատութիւնը: — Պարզապէս բարուբանք:

Եւսի և արարողութեանց պահպանման
մենք, Կաթողիկէայ Կղերը, — Կաթողիկէայ
ըլլալուս համար — ամենաանախանձախնդիր
ենք, որովհետեւ դայս կը նկատենք իբրեւ
մեր ամենանուիրական մէկ պարտականու-
թիւնը և անայլալիւի հնազանդութիւն առ
Փոխանորդն Քրիստոսի. բայց ուր այսպիսի

բան մը չկայ, պէտք չէ Դիողինէսի լապտե-
րով չրջիլ, ստեղծելու համար:

Բայց կարգաւ երթանք:

Կ'առարկուի թէ ինչո՞ւ Հայ Կաթողիկէ
քահանայի մը չի յանձնուիր Ս. Կրթութիւն-
ները քարոզելու պաշտօնը:

Ասոր մէջ բնականաբար մէկ անկարելի-
ութիւն չկայ. բայց պատշաճութիւնը և հար-
կը և մեծագոյն օգուտը նկատի առնուած են:
Ամէն տեղ ուր կաթողիկէ կղերը կրթութիւն
կը կատարէ, առ հասարակ գովելի սովորու-
թիւն եղած է դուրսէն բերել քարոզիչը. նախ
որովհետեւ տեղական կղերականաց առօրեայ
մտերմութիւնն ու ընտանութիւնը կրնայ դեր
մը խաղալ վերջնական արդիւնքի մասին,
այսինքն ըսուելիք յորդորներն, ի վեր հան-
ուելիք ուղղութիւնները՝ փափկանկատ սեղ-
մումներու, չրջահայեցութիւններու տեղի
կու տան, որով և այս բարիքները մեծ չա-
փով կրնան տուժել. խրատները կրնան մաս-
նաւորաց մասին իբր ակնարկութիւններ նը-
կատուիլ. մինչդեռ անծանօթի մը կողմանէ
շատ աւելի համարձակութիւն և անկողմնա-
կալութիւն կ'ենթադրուի, որով և անոր յոր-
դորներն ևն. առանց անհարկի դիտողու-
թեանց հանդիպելու աւելի պողաւէս ար-
գասիք մը կ'արտադրեն:

Բաց աստի, այսպիսի քարոզիչ մը պէտք
է ըլլայ մանաւանդ շատ գիտուն, շատ հը-
մուտ, շատ քաջամարտ, զոր դժուար է դիւ-
րաւ գտնել ամէն պարագայի մէջ: Նոյնպէս
իր անձնական դիրքով եւ որպիսութեամբ
զերծ ըլլալու է ո եւ է դիտողութենէ, որ-
պէս զի աղդեցիկ ըլլան իր ջանքերը եւ ար-
դիւնաւոր:

Արդ ի՞նչ վնաս կայ երբ այս պաշտօնին
որոշուած, կոչումով, ուսմունքով եւ կեան-
քի զբաղումով առ այս յատկացուած, բարե-
կենցաղ, օրինակելի Եկեղեցական մը, կաթո-
ղիկէ՞ թէ եւ ալլածէս, հրաւիրուի այս մեծ
պաշտօնը կատարելու՝ նաեւ Հայ Կաթողիկէ
կղերին մօտ, ինչպէս կ'ընեն Մարոնի, Ասո-
րի, Մելքիդեան. Կաթողիկէ կղերին: Մա-
նաւանդ թէ շնորհակալ պէտք է ըլլայինք ի-
րենց որ այս տաժանելի պաշտօնը յանձն

կ'առնուն եղբայրսիրաբար, օրերով և շաբաթներով:

Ի՞նչ վնաս կամ ի՞նչ անպատուութիւն է մեր կղերին, որ իբր կաթողիկէ, իբր բողոքացածը կաթողիկէ Եկեղեցիէն ստոված է, ըլլայ ան լատինածէս. ծէսը եւ լեզուն պատահական են. էականը վարդապետութիւնն է: Գործիքին պէտք չէ զոհել արուեստը, այլ զայն ծառայեցնել ասոր: Հայ կաթողիկէ Եկեղեցին, ի սկզբանէ անտի թէ՛ աստուածաբանութիւնը, թէ՛ աստուածապաշտութիւնը թէ՛ ջերմեանդութիւնը ընդունած է ընդհանուր կաթողիկէ Ս. Եկեղեցիէն. եւ անանկով հետեւած է իր գերահռչակ Հայրապետներու շաւղին, որոնք բնաւ խտիր չեն գրած ազգի եւ ազգի մէջ, ըստ առաքելական պատուէրի. առ հասարակ ուրիշներու իմաստութենէն օգտուած են. թարգմանած են յոյն Ոսկեբերաններ, Բարսեղներ, Կիւրեղներ. իւրացուցած են ասորի արարողութիւններ, Եփրեմներ, եւն. ընդգրկած են մինչեւ իսկ լատինական սպաններ. ձեւեր եւն. Ս. Գրիգոր Լուսաւորիչ ի Հայաստան բերած է հարիւրաւոր օտար եւ այլածէս քահանաներ, եպիսկոպոսներ, եւն.: Արքայէն աւելի արքայական պիտի ըլլանք. մանաւանդ մենք, որ էջմիածնականաց կողմանէ յարուցուած կրկին ու կրկին ահաւոր հալածանքներէ վերջը երբ մեր Ս. Հարց դաւանած եւ այն ատեն վտանգուած կաթողիկէութիւնը վերանորոգելու հարկին մէջ գտնուեցանք, եւ երբ ան ատենները կրօնքի տեսակէտով խոր տըզիտութեան մէջ լինկած էր էջմիածնական կղերը — թէեւ հիմա ո՛չ նուազ, — լատինածէս կաթողիկէ Ս. Եկեղեցւոյ ինքնազոհ պաշտօնականներն էին որ այս կարեւոր գործին մէջ սիրոյ ձեռքը կարկառեցին մեզ: Բարեկրթութիւնը, դաստիարակութիւնը, գիտնականութիւնը, ամբողջ անո՛նց է որ կը պարտինք: Երեք չորս հարիւր միլիոն կաթողիկէից պէս՝ անո՛նց կը պարտինք մենք ալ մեր զարթուումը, մեր յառաջադիմութիւնը՝ ամէն ճիւղի մէջ. անո՛նց կը պարտինք մեր Մխիթարեան կրօնաւորաց հոգեւոր և մտաւոր կրթութիւնը, անոնց պոյութիւնն իսկ,

որ այն մարդասէր և բազմաբեղուն միջավայրին մէջ ծաղկեցան և իբր ճշմարիտ մանակեացներ դաստիարակուելով Ռոմարիկեցներով, Լիկուորիներով, եւն., Հայ Ազգին կորովի դաստիարակներ հանդիսացան. լատինածէս կաթողիկէ Ս. Եկեղեցւոյ պաշտօնէից շնորհիւ է ուրեմն որ ազատուեցաւ, փարթամացաւ և ուռնացաւ հայ ազգային լեզուն, մատենագրութիւնը, քաղաքակրթութիւնը. պէտք է անհունօրէն ապերախս և նոյնքան տգէտ, կոյր և մանաւանդ յամառ ըլլալ այսպիսի բացայայտ պատմական ճշմարտութիւն մը ուրանալ յաւակնելու համար: Անոնց գիրքերն են որ թարգմանեցինք. անոնց գանձերն են որ իւրացուցինք. և դեռ նոյնը կը շարունակենք ընել:

Ո՛ւր կը մնան ուրեմն այդ սովաժաման բամբասող անազնիւ կաթողիկեայք, որոնք աջ ու ձախ հարուածներ կը տեղացնեն չարութեամբ, կիրք յագեցնելու համար. մինչդեռ այնպիսիներն են որ իրենց գաւակները լատին դպրոցներ կը զրկեն՝ իբրեւ լաւագոյն դաստիարակութեան միջավայրեր:

Կը բամբասեն սակայն ի զուր. քանզի այդ բաներով չէ որ լատինածէս կ'ըլլանք. և լատինացումի վրայ և ոչ իսկ բնաւ խորհած ունինք. և եթէ երբեք, որ անկարելի է, մէկը մտքէն ալ անցունէ զայդ, գիտնայ մի անգամ ընդ միշտ որ Գերագոյն Հովուապետէն ծանր պատիժներով արգիլուած է ծիսափոխութիւնը:

Բայց մենք ինչո՞ւ այսքան երկարենք, իբրեւ թէ կարեւորութիւն տայինք՝ տգիտութեամբ և չարութեամբ վերագրուած ա՛յսքան սուտ և վատ նախատինքի մը...

Բաւական է:

ՀՐԱՇԱԳՈՐԾ
ԱՍՏՈՒԱԾԱՄՈՐ ԿՈՒՍԽՆ ՓԱՏՆԵՐԸ

(Շար. եւ վերջ)

Սոյն այս պատկերին վաւերական օրինակ ըլլալը ստուգող ունինք պաշտօնական վկայագիր մը որ ցարդ կը պահուի բերայի Կ.

Հայոց Պատրիարքարանի Դիւանատան մէջ , զոր Թարգմանաբար հոս կ'արձանագրենք :

«Անգոնայի ընդհանուր Փոխանորդ օգնականը կը վկայէ թէ , Պարոն Պետրոս Աբէլ , Ղալաթիոյ նորակառոյց եկեղեցւոյ մէջ դըր- «ուելու համար քաղաքիս Թագունի ամե- «նայն Սրբոց կոչուած Մայր եկեղեցւոյ մէջ «յարգուող ռամկօրէն Տիրամայր Սրբոյն Կի- «ւակոսի յորջորջուած Աստուածամօր Ս . «Կուսին հրաշագործ պատկերին մէկ ճշգրիտ «օրինակը հանելու համար նկարիչ պարոն «Մաւրանօ Օթթաւիանիի խնդրանք ուղղած «ըլլալով , յիշեալ նկարիչը՝ որչափ կը ներէր «իր արհեստը վերոյիշեալ պատկերը հաւա- «սարմուծեամբ ընդօրինակած է թէ՛ շրջա- «նակի չափին , թէ՛ գունաւորութեամբ և թէ՛ «պատկերի կեցուածքի մասին յար և նման բուն «օրինակին . որով վերոյիշեալ օրինակը , որ «ճշտութեան մասին հետեւեալ կերպով նկա- «րագրուած է , բուն օրինակին համաձայն է :

«Պատկերը իւղաներկ է կտաւի վրայ , «բարձրութիւնն է 28 և կէս սանթիմէր , «լայնութիւնն է շուրջ 22 սանթիմէր : Կը «ներկայացնէ միայն կիսանձն կողմնակի դար- «ձուածքով կամ դոյզն ինչ գլխիկոր դէպ ի «ձախ ուսն յարեալ : Երկու աչուլները կի- «սափակ , այնպէս որ բիրտը թէև կը տես- «նուին , սակայն ո'չ բովանդակ , միայն կոճ- «ղէզի նման ճերմակին կիսովն , և նայուածքն «ուղղուած է դէպ ի ժողովուրդ , սակաւիկ «իմն վար առնուած խոնարհ , պարկեշտ , և «ջերմեռանդ դիրքով : Դուռը անդրալեռնա- «վան երկնագոյն լաչակով մը քօլարկուած , «որ ի ներքուստ բաց մանուշակագունով աս- «տառուած կ'երևի , թուի նաւթակարմիր «գոյնով զգեստ կը կրէ , որոյ մէջ տեղ կ'ե- «րեւի շուրջ չորս սանթիմէր լայնութեամբ «ծալքերով ամբողջուած դեղնահար (խար- «տեալագոյն) քօղ մը որ կարծես անմիջապէս «ուսերէն վար կ'իջնէ : Դէմքը բաց ձիթա- «պտղագոյն է մակերեւոյթը ծածկուած խիստ «մանր ու նուաղեալ հատիկներով , իսկ շուրթ- «ները՝ վարդագոյն են , բայց ոչ կատարելապէս «պայծառ :

«Նմանապէս կը վկայէ թէ Անգոնայի Մայր

«եկեղեցւոյն մէջ պահուող ու յարգուող սոյն «այս Պատկերին բուն օրինակը , անուր «սքանչելիքով մը իր կուսական աչուլները «Ֆիլիքապէս բացաւ ու գոցեց 1796 , Յունիս «25ին , և այս մեծահոգակ հրաշքը շարունա- «կեց ամիսներով , այնպէս որ յիշեալ ժամա- «նակամիջոցին տեւողութեամբ , քառասուն «հազար հոգիներէ աւելի մարդիկ մեծ հիաց- «մամբ զայն դիտեցին , և այն սքանչելիքը «Վսեմ . Կարդինալ Ռանուծծիի կողմանէ , որ «հրաշքի ժամանակ նոյն քաղաքի թեմական «եպիսկոպոսն էր , խիստ քննութիւններով «կատարուած դատաւարութենէ ետքը պաշ- «տօնապէս հաստատուեցաւ , որուն համար «Պիոս է . Սրբազան Քահանայապետը , 1815ին «Անգոնայէն անցած ժամանակ , իւր Օգոստոս- «փառ ձեռօքը այս հրաշագործ պատկերին «գլխուն ականակուռ պսակ մը դրաւ :

«Վերջապէս կը վկայէ թէ յիշեալ օրինա- «կը , որ կ'ուզուի պարոն Պետրոս Աբէլի կող- «մանէ Ղալաթիոյ Կ . Հայոց Յիսուս Փրկիչ «նորակառոյց եկեղեցւոյ լրկուիլ , ըստ ա- «րարողութեան Ս . Եկեղեցւոյ օրհնուեցաւ» :

Ի հաստատութիւն ճշմարտութեան վերը ըստածներուն , ներկայ վկայագիրն եպիսկո- պոսական կնքով կնքուելով յանձնուեցաւ :

Անգոնա , տեւալ յեպիսկոպոսարանէս յսկի 1833 , Ապրիլ 25

Վասն Բնիկ . Փոխանորդի
ԿԱԷԹԱՆՈ ԿԱՆՈՆԻԿՈՍ ՊԱՆՈՒԾԾԻ

(Ենիք)

Վասն Եպիսկոպոսական Դիւանապետի
ՎԻՆՉԵՆՅՈ ԿԱՐԻՊՈԼՏԻ

Մոռացութեան մատնուած , և դարերու ապականութեամբ անտեսուած այսպիսի հրա- շալի պատկերի մը ջերմեռանդութեամբը սըր- տերու մէջ վերարժարծելու նպատակաւ է որ ուղեցի երեւան հանել սոյն պատկերին իս- կութիւնը , գոյութիւնը , որպէս զի օգտուլն անոր երկնային բարեաց պարգեւներէն բոլոր անոնք որ ներկայ դարուս միջնադարը պա- րուրող մուար վարդապետութեանց , պիղծ և ապականեալ բարուց հանդէպ սրտաբեկ և յուսահատ վիճակի մը մէջ կը տատանին : Այն սքանչելագործ Տիրամօր Կուսին Սրբա-

զան պատկերը կը կանչէ իր ներկայութեան՝ երկնային մխիթարութեամբ կազդուրելու արդարները, չնորհաց առատութեամբ կակղեցնելու մեղաց մէջ յամառող անգեղջիւներու քարացած սիրտերը, քանդելու և տապալելու հպարտ և ամբարտաւան հոգիներու կամացը ամբապինդ աշտարակը, ուղղութեան ճամբան առաջնորդելու՝ կամաւոր սգիտութեան խաւարին մէջ խարխափող մոլորելոց քայլերը, յաւէտ ջնջելու սրտերու վեհ և նուիրական կուսութիւնը պղծող և մաշող չար ցանկութեանց մանրէները, ընդ միշտ ցամքեցընելու Աստուածային սիրոյ արտադրութիւն եղող առաքինութեանց հնոցին կրակը մարող մարմնապաշտութեան տղրիւրը, յաւիտենական լոռութեան մասնելու հաւատոյ, կրօնից և ուղիղ վարդապետութեանց դէմ մաքառող և չար որոմներ ցանող թունալից լեզուները: Այն սքանչելագործ պատկերը ի հնազանդութիւն և ի հպատակութիւն կ'առաջնորդէ հետո և անհաւան հոգիները, իրաւազութիւն և հանդարտութիւն կը ներշնչէ խռովարար և կրկին խաղաղութիւնը վրդավող հագիններուն: Կը քաջալերէ տկարամիտները, արիութեամբ գործելու իրենց փրկութեան գործը, հոգեպէս կոյրերուն աչքը կը բանայ, բթացած և խաւարեալ միտքերը կը զօրացնէ և կը լուսաւորէ: Նա նիւթապէս ամէն չընորհք կ'առատաձեռնէ հաւատքով իրեն դիմողներուն: Բաց աչօք, գինք սիրող և օրինակներուն, առաքինութեանց հետեւիլ ջանացողներուն մայրական խնամքը կը յայտնէ իսկ պիղծ, անմաքուր, անհամես, հպարտ և յամառ մեղաւորաց վրայ զգացած տեղահեղութեան և ծաւի ի նշան կուսական աչուքները կը դոցէ:

Վերջապէս այն սքանչելագործ պատկերը գիշեր ու ցորեկ անդադար և առանց խտրանաց ամէնքը իրեն կը կանչէ. չյապաղինք կատարեալ հաւատքով իրեն գիմելու, որովհետեւ իր օգնութեան կարօտ ենք: Տեսնենք գինք մեր վրայ միշտ բաց աչօք, մայրական սիրոյ և զթոյ արտայայտութեամբ, և լսա՜հ ըլլանք որ աշխարհ, պետութիւնք, հասարակութիւնք, ընտանիքներ, հոգիներ, պիտի

հանդարտին, պիտի ուղղուին, չար վիշապը որ ամէն ատեն կը թագաւորէ, անոր կուսական ոտից ներքեւ պիտի յաղթահարի, ճշմոտի պիտի, և մենք նոր կեանք և նոր ոգեւորութիւն պիտի ստանանք և պիտի փրկուինք:

ՅԱԿՈԲ Վ. ՄԱՂԱՐԵԱՆ

ՍԻՐԵԱՆԻ ԺԱԳՕՊԻԹ ԲԱԹՐԻԳԻՆԻՆ

ՎԷ ԻՔԻ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԼԱՐԸՆ

ԳԱԹՕԼԻԹ ՄԷՋԷԴԻՆԻ ԳԱՊՈԽԼԷՐԻ

Լէ Միսիոն Գաթոլիք Բեապիտի մէկգումարնը տէր՝ ու նէշը իթ տիլի գլխաւորի մէքթուպ մուճիպի մէքթուճիթ խապէրլէր վերմէքտէ տիր: Սիրեանի Ժագօպիթ բաթրիգինին քէնտի իքի արքեպիսկոպոսալարլա պերապէր գաթօլիք մէկհէպիմիգի գապուլ էյլէմէսի, տահա սայիր դարձլարա տէլալէթ իտէր պիր խալլըլը վազաւ օլտուղընտան, իշպու մէքթուպը պիգ տէ քէմալը մէքթուճիթլէ թէրճէմէ սուրէթիլլէ տէրճի սիւթուճը իպթիհաճ իտէրիզ:

Րիքպէքլու Սիրեանի Գաթոլիք Բաթրիգինին Բիւրսիի Եփրիմ Լեզիսիսկի վիսիպի պուլլուս Լիւրէքլու Մօն. Լարապիսկըն մեքթուպը:

Սապըզ Երուսաղէմ արքեպիսկոպոսը Մօն. Եղիա Հալլուլի վէ սապըզ Արմէ արքեպիսկոպոսը Մօն. Արահամ Տալիթ նամընտա իքի Ժագօպիթ (միաբնեայ) արքեպիսկոպոսլար պէրապէրլէրինաէ պիր տէ Ժագօպիթ վարդապետ պուլլուսարազ, 1912 Դեկտ. 10տա Սիրեանի գաթօլիք Անթաքիա Բաթրիգի իքինճի իգնատիոս Եփրիմ Բահմանինին նէգտինէ Պէյրութա կէլիլլէր: Պուլլար գաթօլիք մէգհէպինի գապուլ իթմէք խուսաւընտաքի ազմը գաթիլլէրինի Բաթրիգ հազրէթլէրինէ արդ էյլէրլէր:

Մօն. Բահմանի պիր չէֆազաթը բէտէրանէ իլէ պուլլարը գապուլ վէ Պէյրութտա պուլլուսարազլարը միւտտէթճէ նէզաինտէ միսաֆիր էյլէր: Վէ էվլէլ էմիրտէ, ասլէն Սիրեանի պուլլուսան Յիսուսեան Լ. Անթուան Սալհանինին խաւրէսի թահթընտա պիր հոգեւոր կրթութիւն ետալլըր:

Օն պիր կիւն սօնրա Դեկտ. Չլտէ Մօնս. Բահմանի, Սէքիդինճի Ուրքանոստան թային օլունան սուրէթ իւզէրինէ օնլարն տին իգ-րարնը ալըր վէ պու միւնասիպէթլէ օնլա-րու խիթապ էյլէտիյինութգընտա, Սիւրեանի ժագօպիթլիքտէ չօպանլարը պուլընտըգլարը ճէմաաթլարըն հիշ օլմազսա պիր գըսմընը գաթօլիք քիլիսասընա կէթիւմէյէ օլան վա-պիթէլէրինի տէ իսթար էյլէր:

Պու իքի արքեպիսկոպոս վէ պիր վար-դապետին գաթօլիք օլմալարը խապէրի ժա-դօպիթ ալէմինէ պիր հիւսնի իթէրի իտէրէք, օնլար միյանընտա տա Բօմա Քիլիսասընա սօլորու պիր հապընլըգ ալամէթլէրի նիւմա-կան օլմայա պաշլատը:

* * *

Իքի արքեպիսկոպոսլար գաթօլիք մէգ-հէպի ապայտինի վէ գալալտի ինթիգամի-յէսինի օլտուգճա էօյրէնտիքլէրինտէ, Մօնս. Բահմանի, Եղիա Հալլուլի եպիսկոպոսու բաթ-րիգ վէքիլի սըֆաթըյա Երուսաղէմէ իգամ էյլէր:

Մօնս. Հալլուլի, մահէլլը մէմուրիյէթինէ վասըլ օլտուղը կիւնիւն ֆէրտաուը կիւնիւ, Շարգ ուսուլլէրինէ քիւլլիէն մուղայիր օլան պիր էսէրի հիւրմէթ օլմաղ իւզրէ ժագօպիթ բաթրիգի Իգնատիոս Ապտիւլ Մէսիհ թա-րաֆընտան զիյարէթ իտիլիւ, Սիւրեանիի գատիմէրին բաթրիգի պիր գաշ ալ Մալա-պարտա գալըպ, Կրատա իւշ տէ եպիսկոպոս թագաթիս իթտիքտէն սօնրա, Երուսաղէմէ հէնուզ ալտէթ էյլէմիշտի, Պու զիյարէթ էննասընտա, պիր վազըթ քէնտինէ թապի պուլընան Մօնս. Հալլուլինին գաթօլիք օլ-մասընը մուախազա էթմէտիքտէն մատա, առէթա թէպրիք տէ իտիյօր կիպի կէօրիւ-նիւյօրտը:

Իքի կիւն սօնրա, կէրէք պու զայրը մէ-մուլ զիյարէթին վէ կէրէքսէ զիյարէթ էս-նասընտաքի միւպահասաթըն հիքմէթի ան-լաշլսը, Չիւնքի պու տէֆա ժօքօպիթլէրին բաթրիգի Սիւրեանի գաթօլիք Բաթրիգիսա-նէսինէ կէլէրէք, քէնտիսինին տէ Գաթօլիք Քիլիսասընա տախիլ վէ Բարա հապրէթլէրի-

նէ քեամիլէն միւնգատ վէ թապի օլմազ ար-զուսընտա պուլուլնտուղընը պէյան էյլէր: Ազ սօնրա լաթին բաթրիգի Մօնս. Ֆ. Բա-մասէիյէ տախի կէօթիւրիւմէսինի արզու էյլէյէրէք, միւշարիլէյին հուզուրընտա տա ալիսի նիլէթ վէ պէյանաթընը թէքրար իտէր վէ Սրբազան Բարա հապրէթլէրինէ քէնտի-սինի թալսիյէ էյլէմէսինի Մօնս. Բամասէի-տէն իլթիմաս իտէր: Վէ օրատան չրգտըգ-տան սօնրա Պէյրուլթա պուլուլնան Մօնս. Բահմանիյէ պիր թէլէկրաֆ գէշիտէ իտէրէք հիւսնի իսթիյարըյա վէ պիլա գայտ ու շարթ Բօմա քիլիսասընը գապուլ էյլէտիյինի օնա պէյան իտէր:

Մօնս. Բահմանի, սապըգ ժագօպիթ Բաթրիգինի պէյրուլթա տալէթ իտիպ սամի-միյէթի ֆէվգէլատէ իլէ օնը գապուլ էյլէր վէ հէման իֆաթէյի վապթ իթմէքսիզին օնըն թալիմինէ պէզլի զայրէթ իտէր: Մայիս Յտէ Մօնս. Ապտիւլ Մէսիհ տին թագրիլինի վէր-տիքտէն սօնրա րէսմէն Գաթօլիգ Քիլիսասընա գապուլ օլունըր:

Պու դարձըն, Սիւրեանտա, պէյն էն նահ-րէյնտէ, Քիւրտիսթանտա վէ Մալապարտա Մօնս. Ապտիւլ Մէսիհ սատըգ գալան րէք չօգ ժագօպիթլէր արասընտա հիւսնի նէթի-ճէլէր ինթաճ էտէճէյի մէմուլ օլունմագտա տըր: Չաթէն պազը ժագօպիթ քանտալար քէնտիսինէ թէպրիք մէքթուպլարը եաղմըշ, տիկէրլէրի տէ էն եապըն պուլուլնան սիւր-եանի գաթօլիք եպիսկոպոսընա վէ եա վար-դապետինէ կիտէրէք ճէմաաթլարընը պիր գըսմըյա պէրապէր գաթօլիք քիլիսասընա օլան թապիլիյէթլէրինի արզ էյլէմէքտէ պու-լունտուգլարընը իսպար իթմիշ տիլլէր:

Մօնս. Ապտիւլ Մէսիհ, Մօնս. Բահմանի-նին Բօմայա կիթմէսինտէն պիլիսթիֆատէ, խաթթը տէնթիլլէ եաղմըշ օլտուղը վէ տին իգրարը իլէ Քիւրտի Շէրիֆէ օլան ուպու-տիյէթի թամմէսինի հալի պուլընան մէք-թուպընը հաշմէթլու Բարա հապրէթլէրինէ թագտիմ էյլէմէսինի միւշարիլէյի Մօնս. Բահմանիտէն րիճա էթմիշ տիր:

Յունիս 11 տէ իշպու մէքթուպ պիր ի-թալիանճա թէրճէմէսիլլէ պէրապէր Բարա

հազրէթլէրինէ թագաւոր իտիւրէք, միւշար-
իլէյհ հազրէթլէրինին մուճիպը մահգուզիյէթ-
լէրի օլմուշ վէ Գաթօլիք Բիլիսասընտան ու-
զազ պուլընանյարը հազրէթի Բիլիսայա կէ-
թիրմէք պապընտաքի զայրէթինտէն սօլայը
Մօնս. Բահմանիյի թէպրիք վէ պուլ եօլտա
տէվամ էյլէմէթինի տէ իլավէ էյլէմիշ վէ եէ-
նի Գաթօլիք օլան Մօնս. Ապտիւլ Մէսիհէ,
իքի Սրքեպիսկոպարա վէ օնլարա իմթիսալ
իտէնլէրին ճիւմլէսինէ թէպէրրիւքաթիք րէ-
սուլանէսինին թէպլիղինի Մօնս. Բահմանիյէ
թէվտի էյլէմիշ տիր:

ՍՐԲՈՅ ԿՈՒՍԻՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄԸ

Փ. ՏԷՇՍՆ.

Սրբոյ կուսին Մարեմայ կենաց վերջին և
փառաւոր խորհուրդն հետեւեալ մանրամասն
պարագաներով պատմող և առաքեալներէ
ծագում առած հին աւանդութիւն մը կայ
զոր սուրբն Դիոնիսիոս Արիսպագացին իւր
զրեանց միոյն մէջ իբր ականատեսս վկայ կը
ներկայացնէ և զոր սուրբ հարք, ի մասնա-
ւորի սուրբ Յովհաննէս Դամասկացի և այլք
կը յիշեն:

Փրկչին Համբարձումէն ի վեր քսան ե-
րեք տարիներ անցած էին և արտասուաց
վայրին մէջ աստուածային Մօր աքօսին եր-
կարած էր իւր կենաց մինչև եօթնասուուն և
երկրորդ տարին Այնչափ տարիներ, աշխա-
տութիւններ, վիշտեր և արտասուքներ բը-
նաւ այլայլած չէին իւր դիմապիծն: Նա պա-
հած էր իւր հիանալի գեղեցկութիւնն, ոյժն,
առողջութիւնը, նոյն իսկ աշխոյժը: Բայց
յերկինս ուղղած հառաչներն աւելի եռան-
դուն և յաճախ էին: Աստուածային որդւոյն
հիմնած եկեղեցին տարածուած էր ընդհա-
նուր աշխարհ: Դժոխաց և աշխարհի ճիգե-
րը, ամէն տեսակ արգելքներ և հալածանք-
ներ աւելի փայլ և կորով տուած էին Աւե-
տարանական աշխարհակալութեանց: Յիսուսի
և իւր սուրբ մօր օրհնեալ անուններուն հետ
հասած էր աշխարհիս մինչև ծայրը ճշմարիտ

Աստուծոյ ծանօթութիւնները, և Մաղաքիայի
մարգարէացած անարատ զոհը, անրիժ և
միշտ կենդանի սուրբ ողջակէզը յարեմոյց
յարեւելս կը նուիրուէր ի թողութիւն մեղաց
և ի մոռնոյ հաւատացելոց: Հեթանոսաց մէջ
ևս Աստուծոյ անունը մեծ էր, եւ Մարեմայ
հովանաւորութեան տակ հոգւով և ճշմար-
տութեամբ երկրպագութիւնը մինչև սնտու-
ներու և անապատներու խորը թափանցած
էր: Այլ հասած կ'երեւէր աստուածային Մօր
համար հանգստեան և ազատութեան ժամը:
Իւր աստուածային Որդւոյն միանալու շնորհ-
քը ընդունելու համար աւելի մեծ էր իւր
փափաքն, աւելի ստիպողական էին իր պա-
ղատանքները: Ինքն ալ գիտէր թէ այս փա-
ռաւոր յաղթանակին համար երկնաւոր Հօր
յաւիտենական վճիռներու մէջ որոշուած ժա-
մը հնչած էր:

Հրեշտակ մը՝ անշուշտ Գաբրիէլ հրեշտակը
որու յանձնուած էր, կ'ըսէ սուրբն Իլդէ-
փոնս, Սրբոյ կուսին վերաբերեալ ամէն պաշ-
տօն, իւր թագաւորին մօր քով խրկուեցաւ
վերնատունը, ուր կը բնակէր նա այն ժա-
մանակ, աւետելու համար բարի լուրը:
Մարդկային կարողութենէ վեր է պատմել
անոր սիրոյ հրճուանքն այս ուրախալի ա-
ւետիսին վրայ: Անճառելի ժպիտով մը և
աչքերն եռանդեամբ յերկինս սեւեռած՝ կըրկ-
նեց իւր Աւետման խօսքերն «Ահաւասիկ կամ
աղախին Տեառն, եղիցի ինձ ըստ բանի
քում»։ ահա այս եղած պիտի ըլլայ իւր մի-
ակ պատասխանը: Սակայն Տիրոջ բարու-
թենէն ընդունած այդ անսահման շնորհաց
համար իրեն հետ միասին շնորհակալ ըլլալու
հրաւիրեց սուրբ հրեշտակապետը՝ իւր հետե-
ւորներով և սիրոյ նոր ճիգով մը աւելի
սերտօրէն Աստուծոյ միանալով՝ դարձեալ ըն-
ծայեց իւր կենաց ողջակէզն զոր այնչափ
անգամներ ընծայած, բոլորանուէր մատու-
ցած և հաւատարմօրէն զոհած էր: զոհ մը որ
ուրիշ բան չէր եթէ ոչ բոլորովին ի սիրոյ
գոյացեալ խոնարհութեան մը քաղցր և ե-
ռանդուն տենչաւքն, անսուտ եւ հրճուալի
վկայութիւն հոգւոյ մը որ միշտ Աստուծոյ
լեցուն և Աստուծոյ պատկանած էր:

Ինչ յետոյ նոյն ինքն Մարիամ սոյն կարևոր լուրը կ'իմացնէ գողգոթայի վրայ իրեն տրուած որդւոյն՝ Յովհաննու զայն կը հաղորդէ Երուսաղէմի եւ չրջակայից եկեղեցւոյն :

Տրոմութեան եւ ուրախութեան անճառելի խառնուրդ մը կը տիրէ բոլոր սրտերուն : Մէկ կողմանէ ամենասուրբ եւ ամենագլխած մօրմէ մը բաժնուելին կ'ողբան , միւս կողմանէ կ'ուրախանան անոր այսչափ ժամանակէ ի վեր սպասած երջանկութեան , այնչափ արժանապէս վաստկած փառաց վրայ :

Սակայն այնչափ խանդաղատանօք սիրած մօրը՝ երկրին վրայ վերջին մխիթարութիւն մը տալու համար , ինչպէս նաեւ Առաքելոց ալ քաջաւերութիւն եւ սիրոյ հրաշալի հաւաստիք մը , ուզեց Տէրն Մեր զամէնքը հաւաքել այս հանդիսաւոր վայրկեանին : Ս . Դիոնեսիոս Արիսպագացին՝ որ ականատես վկայ եղած է , իւր «Յաղագս աստուածային անուանց» գրքին երրորդ գլխուն մէջ կ'ըսէ թէ ամէն Առաքեալները հրաշխք Երուսաղէմ բերուեցան վերջին անգամ մըն ալ տեսնալու համար այն երանելի մարմինն որ ծնունդ տուած էր կենաց :

Երուսաղէմի Պատրիարքն Յորնաղ , սուրբ Անդրէաս Կրետացի , սուրբն Յովհաննէս Դամասկացի , սուրբն Գերմանոս Կոստանդնուպոլսոյ , Ստեփան քահանան , Մետափրատ , Նիկիւփորոս որ կը յիշէ նաև Մարկիսոս կայսեր առջև Յորնաղի ճառը , եւ ուրիշ շատեր կը յաւելուն ըստ լաւագոյն աւանդութեան թէ Առաքեալք աշխարհիս այլևայլ մասերէն օգերու մէջէն փոխադրուեցան հրեշտակայ միջնորդութեամբ եւ Բարոնիոս սոյն աւանդութիւնը հին եւ յարգելի կ'անուանէ :

Ահա Առաքեալք արտասուածքոր աչօք արդէն շարուած են կուսական մահճին շուրջ , ուր կը գոռուի Մարիամ մեռնիլ եւ թաղուիլ ուզած դիրքովն , ձեռքերը կրծոց վրայ միացած , քաղցր ժպիտ մը չրթանց վրայ : Անճառելի անդորրութիւն մի կը տիրէր իւր ճակտին վրայ , եւ աչացը մէջ փայլող սէրն ու զմայլումը վարդապոյն կը ներ-

կէին իւր այտերը . երկնային , հրեշտակային , աստուածային բան մը կը ճառագայթէր ամբողջ իւր անձին վրայ : Նախ զԱստուած կը փառաբանէ , եւ ապա չնորհակալ կ'ըլլայ այն մխիթարութեան համար , զոր ունեցաւ երկրիս վրայ վերջին անգամ մըն ալ տեսնալով զանոնք որ իր աստուածային Որդին ընարած էր իր եկեղեցւոյ հիմն ըլլալու եւ իւր անունը աշխարհի ամէն ցեղերու եւ ազգերու ճանչցնելու համար . չնորհաւորեց զանոնք Հոգւոյն Սրբոյ՝ իրենց առաքելութեանց պարգեւած յաջողութեան համար , եւ իրենց ընթացքին վերջը՝ երկինքը իրենց սպասող գահերը ցոյց տալով ըսաւ թէ՝ ինքն ալ կ'երթար մարմնացեալ Բանին քով սպասելու : «Ո՛հ , աքսորանացս վերջին ժամերը ձեր արտասուքներով մի տխրեցնէք , գիտէք թէ ուր կ'երթամ . որչափ երկար ժամանակ է որ բաժնուած եմ որդեակէս եւ Աստուծմէս . . . : Խնժի կը սպասէ , պիտի միանամ իրեն այլ եւ չբաժնուելու համար . կարելի՞ է որ զձեզ մոռնամ երբէք , մոռնամ իւր եկեղեցին եւ այն զաւակները զորս ինձ առաւ իւր վերջին շունչը աւանդելէ առաջ . եթէ այս աշխարհիս մէջ կրցայ այնչափ օգնել թէ անոնց եւ թէ ձեզի , որչափ աւելի մեծ պիտի չըլլայ կարողութիւնս երկինքը՝ ամենակարող Որդւոյս քով . . . բայց ահա ինքն իսկ իւր սիրելի մօր ընդ առջ կու գայ :»

Ըստ վկայութեան սուրբ Յովհան Դամասկացիի եւ ուրիշ շատերու որ նախկին աւանդութիւնէ լսած էին , իւր աստուածային մօր հոգին ընդունելու համար՝ Յիսուս Քրիստոս իրօք իջած էր յերկնից իւր երկնային արքունեաց հետ : Սուրբ Կոյսը զայն տեսնելուն՝ զինքը կոչող ծանօթ ձայնը լսելուն պէս անսահման ուրախութեամբ մը ցնծաց , իւր բազուկներն ուղղուեցան դէպի ի իւր Որդին եւ իւր չրթունքներէն լսուեցան սա խօսքերը . «Բու կամքդ թող կատարուի , Որդեակ իմ եւ Աստուած իմ , որչափ ժամանակ է որ կը հառաչեմ քու ետեւէդ , եւ ոչինչ կրնայ ինձի համար աւելի արորժելի ըլլալ , քան քեզ հետեւիլ ուր որ ես յաւիտեան :» Եւ այս խօսքերն ըսած ժամանակ՝ իւր հոգին զոր

սիրոյ նոր յորդովիւն մը կը ճնշէ և զոր Աստուած այլեւս չի կեցներ, կը բաժնուի մարմնէն և հրեշտակաց ներդաշնակութեանց մէջ իւր Որդւոյն հետ միասին կը թռչի յաւիտենական տաղաւարները:

Սակայն երկնային բուրում մը ողողեց վերնատունը. արասուքները դադրեցան, քաղցր ուրախութիւն մը թափանցեց բոլոր սրտերը: Առաքելոց և հաւատացեալոց ձայները միացան հրեշտակաց ձայնին՝ հնչեցնելու համար քաղցրանուագ օրհներգներ ի պատիւ Աստուծոյ և իւր սուրբ Մօր: Հիւանդներ կը բերուին սուրբ մարմնոյն քով և կը բժշկուին, կոյրերը կը տեսնան, խոււրը կը լսեն, կաղերը կը քալեն, համբերը կը խօսին և իրենց շնորհակալութեան երգերը կը միացնեն ամէն կողմէ հնչող երկնային և երկրային նուագներու:

Վերջապէս կը հասնի յուղարկաւորութեան ժամը, ինքնիրեն առած դիրքովն անկողնոյ վրայ հանգչող մարմինը՝ զոր Առաքեալք անձամբ կը կրեն՝ յաղթականօրէն կ'անցնի Երուսաղեմայ փողոցներէն, հաւատացեալոց բազմութիւնը կը հետեւի՝ ձեռքերնին ջահերով: Հրեաներն իսկ յարգանք և երկիւղ կը զգան, գերբնական անուշահոտութիւն մը կը բուրէ թափորին անցած ամէն տեղերը. վերնատան հրաշալի բժշկութիւնները կը կրկնուին, ամէն ոք անձանօթ ներդաշնակութիւններ կը լսէ օդին մէջ և յարատեւ առող բազմութիւնը մինչև Յովսափատու ձորը կ'ընկերանայ ուխտի նոր տապանակին: Հոն Դեթսեմանի գիւղին մօտը, Զիթենեաց և Համբարձման լեռներու ստորոտը՝ սուրբ Յովսեփայ, սուրբ Յովակիմայ և սուրբ Աննայի դամբարաններուն քովը, օրհներգներու և աղօթքներու մէջ, սուրբ աւանդը գերեզմանի կը յանձնուի: Ահագին քար մը կը գոցէ մուտքը և նա որ այնչափ կատարեալ կերպով նմանած էր Յիսուսի առաքինութիւններուն և գործերուն և անոր մահուան, նմանեցաւ անոր՝ նաեւ գերեզմանին խոնարհութեան մէջ:

Մինչև երեք օր հրեշտակային զեղ-գեղներ կը լսուէին գերեզմանին շուրջը,

փոխնիփոխն Առաքեալք եւ հաւատացեալք կու գային հանդիսատես ըլլալու և իրենց հրգերն ևս միացնելու՝ երբ Հնդկաստանէն կամ Եթովպիայէն հասաւ սուրբ Թովմաս՝ կենդանի Առաքեալներէն միակը որ Աստուծոյ մի գաղտնի խորհրդովը ներկայ գտնուած չէր այս սուրբ արարողութեան, ուղեց զոնէ վերջին անգամ մըն ալ դիտել իւր Օգոստոսփառ թագուհւոյն դէմքը: Հնա՞ր էր մերժել այսպիսի օրինաւոր խնդիրք մը, ուշանալն իւր յանցանքն էր. խորհրդաւոր պատճառ մը չկա՞ր արդեօք: Ուստի Առաքեալք վերադառնալու հաւաքուեցան փառազօրօ գերեզմանին շուրջը, ամէնքը միասին վերցուցին զայն գոցող վէմը եւ երբ աստուածային մայրը վերջին անգամ մըն ալ տեսնալու տենչով ամէնքը մէկ կը խոնարհէին դէպ ի ներս, ուրիշ բան չգտան կ'ըսէ Շաթոպրիան՝ հետեւելով Յովհաննէս Դամասկացիի և աւանդութեան, եթէ ոչ կուսական զգեստ մը պարզ եւ աղքատիկ զգեստը փառաց թագուհւոյն զոր հրեշտակք փոխադրած էին յերկինս:

Այն կուսական մարմինը, որ Բանին մարմնացելոյ ընձեռած էր իւր մարմին, որուն հոգին աւելի չքնաղ հրաշալիք մը զերծ պահուած էր սկզբնական արատէն եւ որ եւ է մեղքէ. որուն մահը վերջապէս սիրոյ գոտ արդիւնքն եղած էր, պէ՞տք էր, կրնա՞ր Լնթարկուիլ գերեզմանի ազակաւորութեան: Մարիամ, որ այդ մարմնոյն եւ անոր կատարելիք աստուածային խորհուրդներու պատճառաւ պճնուած էր այնչափ առանձնաշնորհութիւններով եւ տուրքերով՝ կրնա՞ր զայն չխնդրել վերստին իւր Որդեակէն որուն մայրը եղած էր անով: Յիսուս կրնա՞ր զայն իրեն զլանալ եւ մինչև ընդհանուր յարութեան օրը երկարել այն լայսարձակ եւ անհասկնալի բաժանումը՝ ինչ որ հակառակ իսկ պիտի ըլլար իւր արդարութեան և սիրոյն: Ո՛չ, կը գոչէ Պօսիւէ, ոչ, որպէս՝ կ'ը Մարիամայ, ձեր մօր սուրբ մարմինը, ողջախոհութեան գահը, մարմնացեալ իմաստութեան տաճարը, Հոգւոյ Սրբոյ գործին եւ բարձրելոյն զօրութեան Աթոռը չէր կրնար գերեզմանին մէջ

մնալ : Մարեմայ յաղթանակը անկատար պիտի մնար, եթէ կատարուէր առանց սրբազան մարմնոյն՝ որ իւր փառաց իբր աղբիւրն եղած էր :

Ո՛հ, ո՛հ, դարերուն հաւատքը, Եկեղեցւոյ փառազարդ հանդիսաւորութիւնները ուղղափառութեան հնազոյն աւանդութեանց վրայ հիմնուած բոլոր սուրբ հարց վարդապետութիւնը՝ փառաւորեալ կուսին Մարեմայ վերափոխման անուամբ կը հաստատեն անոր կուսական մարմնոյն եւ անարատ հոգւոյն կրկին յաղթանակը, բոլոր ուղղափառ ձայնները, բոլոր դարերն ցնծալին կը կրկնեն հին օրինաց մարգարէական օրհներգներն, «Ելի՛ր, ո՛վ Տէր, եւ մտի՛ր քու հանգիստդ, դուն եւ քու սրբացուցած տապանակդ. ո՛վ է որ անապատէն կը բարձրանայ, առաքինութիւններով գեղեցկացած, զմուռսի, խունկի, եւ ամէն անուշահոտ փոշիներու բուրումներէ գոյացած թափանցիկ գոլորչւոյ նման : Նա է, կու գայ, կը բարձրանայ անապատէն, լի բերկրութեամբ եւ կրթնած սիրելի Որդւոյն՝ որ ձեռքէն բռնած իրեն կ'առաջնորդէ եւ կ'անցընէ բոլոր երկնային բարձունքներն, Հրեշտակներն, Հրեշտակապետներն, Աթոռները, Զօրութիւնները, Տէրութիւնները, Իշխանութիւնները, Կարողութիւնները, Քերովբէներն ու Սերովբէներն իրմէ վար են եւ ինչպէս կ'երգէ Եկեղեցին վերափոխման ժամերգութեանց մէջ. «Աստուածածինն բարձրացաւ երկնային արքայութեան մէջ հրեշտակաց դասերէն վեր : Իր գահը Որդւոյն գահին մօտն է : Նա թագուհի է, թագուհի հրեշտակային նուիրուպետութեանց, թագուհի ամենայն սրբոց» :

Ի՛նչ յաղթանակ, ի՛նչ փառք, ի՛նչ տօն է Մարեմայ յերկինս վերափոխումն : Սուրբ Յովհաննէս Պատմոսի յափշտակութեանց մէջ զիտեց զայն օր մը եւ զրեց. Երկնից մէջ Աստուծոյ տաճարն առջևս բացուեցաւ. եւ այդ տաճարին մէջ իւր ուխտի տապալանալի երեւցաւ ինծի : Երկնից մէջ իսկ յոյժ հրաշալի բան մըն էր, Աստուծոյ փառքը զայն ամէն կողմէ կը շրջապատէր : Լուսինը իւր տալիս ներքեւն էր ի նշան իւր յաւիտե-

նական հաստատութեան տասներկու աստղերու պսակ մը կը պլպլար գլխուն վրայ, փայլուն նշանակ իւր սրբութեան, իւր կարողութեան եւ իւր գթութեան :»

Ո՛հ, կ'ըսէ սուրբն Հերոնիմոսի հետ միասին՝ սուրբն Բեռնարդոս, ո՛վ պիտի կարենար երբեք պատմել Քրիստոսի ծնունդն եւ անոր Մօր վերափոխումը :

ԵՐԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՆԵՒ

Տ Օ Ն Ա Յ Ո Յ Յ

Օգոստոս 17	†	Կիր. քկ. Վերափոխումն Ս. Կուսին
18		Բշ. գմ. Բ. օր Վերափոխման
19		Դշ. գկ. Գ. »
20		Դշ. դմ. Դ. »
21		Եշ. դկ. Ե. »
22		Ուրբ. ամ. Զ. »
23		Շա. ակ. Է. »

ՍՈՒՐԲ ԱԼՓՈՆՍՈՍ ԼԻԳՈՒՈՐԻ

Տօմար՝ 2 Օգոստոս

Ահա Սուրբ մը, որուն վրայ հաւասարապէս կը փայլին առաքելական եռանդ, ճգնաւորական խառնկեցութիւն, վարդապետական գիտութիւն եւ աւետարանական խոնարհութիւն. իր բարոյական աստուածաբանութիւնը, որ Ս. Գահէն քննուած եւ հաստատուած է, իր անուը հոգեկեց ամէն կողմ, բայց մանաւանդ Յրոնտայի մէջ, ուր, պայտէս ըսենք, մաքրեց արհայութեան ճամբան շատ փուշերէ եւ աստուկներէ գորոնք յանսենեանց հերձուածը ցանած էր : Կրնայ ըսուիլ որ այժմ ամէն տեղ բարեպաշտութիւնը միայն Ս. Լիգուորիի գիրքերով կը խօսի մեր Տէրոջ Յիսուսի Քրիստոսի եւ իր Կոյս Մօրը հետ : Իր յանձնարարած բոլոր առաքինութիւնները կը փայլին իր վրայ : Իր կեանքն ու իր երկերը ամբողջ մը կը կազմեն եւ զիրար կը բացատրեն : Վերջապէս իր ոգին մնաց, ապրեցաւ իրմէ վերջն ալ, եւ դեռ եւս կ'ոգեւորէ Ս. Փրկիչ Ընկերութիւնը. (Rédemptoristes) եւ Սուրբ իր գաւազներուն միջոցաւ, հիմա եւս կը շարունակէ աւետարանել :

Սուրբ Ա. Լիգուորի ծնաւ 1696ին, Մարիանէլլա, Նեապոլոսի մէջ, եւ մկրտութեան ժամանակ կոչուեցաւ Ալփոնսոս-Մարիան :

Իր բարեպաշտ մայրը սորվեցուց իրեն շատ առաքինութիւններ եւ աստուածային օրէնքը : Անիկայ իր հնազանդութեամբը, հլու թեման ու ջերմ եռանդութեամբը կատարեալապէս կը համապատաս-

խանէր իր մօր փոխմեանդն փափաքներուն: Ծնողքը ղինքը շատ սիրելիուն համար չկրցան զինքը իրենցմէ հեռացնել և դպրոց մը զրկել: Անիկայ իր հայրենի տան մէջ դաստիարակուեցաւ ճարտար ուսուցիչներու կողմէ: Օժտուած ըլլալով կորովի մտքով և միանգամայն սուր յիշողութեամբ, սորվեցաւ լաւ կերպով լատիներէն, յունարէն և իմաստասիրութիւն:

Բայց աւելի ևս փայլեցաւ եկեղեցական և քաղաքական իրաւաբանութեան մէջ. և այս երկու գիտութեանց վարդապետ անուանուեցաւ տասներկեց տարեկան եղած տանն: Իր բարեպաշտութիւնը երբէք չնուազեցաւ մանուսենդ Ս. Խորհուրդին և Կուսման, նկատմամբ: Ամէն օր կ'այցելէր այն եկեղեցին, ուր կը կատարուէր 'Բառասուն-ժամուց պաշտօնը, որ միջոցին՝ Ամենասուրբ Խորհուրդը՝ մեծաշուք փառաւորութեամբ կը մեծարուի հաւատացեալներու կողմէ: Այս պարագաներուն մէջ նշանաւոր կը հանդիսանար իր ջերմեանդութեամբը և աչքը անդադար սեւեռած կը բռնէր իր սիրոյ առարկային վրայ:

Այժմոսս քիչ տասնէն Նէապոլսոյ ամենէն նշանաւոր փաստաբաններէն մին եղաւ: Թագաւորութեան ամէն կողմերէն իրեն կը յանձնուէին ամենէն դժուար դատերը: Միշտ հաւատարիմ մնաց իր ամէն ջերմեանդական սովորութեանց. ամէն շարաթ կը հաղորդուէր, պահքերը և ծովերը կը պահէր և ամէն տարի հոգեւոր կրթութիւն մը կ'ընէր: Ահա այն պարագան որ իր կոչումը սրուցի: Կարեւոր դատի մը մէջ ուր պաշտպանութեան դերը ստանձնած էր, ամբողջ ամիս մը տուաւ խնդիրը ուսումնասիրելու և իր փաստերը պատրաստելու: Եւ գատաւարութեան օրը ծափահարուեցաւ այն անթիւ անհամար ունկնդիրներէն, որոնք ամէն կողմէ եկած էին: Նախագահը ի նպատակ իրեն վճիռ տալու վրայ էր երբ հակառակորդ կողմը, փոխանակ պատասխանելու, աղաչեց ժպտելով՝ որ դատը նորէն քննուի: Հաւանեցաւ առանց տատամսելու, վստահ ըլլալով իր մէջ բերած փաստերուն յաղթահարիչ ուժին վրայ: Բայց շատ զարմացաւ, յանկարծակիի եկաւ՝ երբ վերահասու եղաւ թէ զանց ըրած է նկատի առնուլ խնդրին մէկ կէտը որ հիմնովի կը տապալէր իր բոլոր պատճառաբանութիւնները: Ասոր վրայ շփոթեցաւ, ամօթահար եղաւ վախալով որ չըլլայ թէ այս սխալանքը իրեն շարամբսութիւն համարուի: Բայց բոլոր ունկնդիրները արդարացեցին ղինքը միաբերան, և նախագահը ջանաց սիրտ տալ իրեն, ըսելով թէ այդօրինակ սխալումներու ստեպ նիւթակայ կ'ըլլան ամենէն ուղղամիտ մարդիկ անգամ: Սակայն իսկոյն շառագունեցաւ, շիկնեցաւ և վեհանձնօրէն իր սխալիլը խոստովանելէ և ներում խնդրելէ յետոյ ելաւ գնաց:

(Շարունակելի)

ՀՈԳԵՒՈՐ ՄՏԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ „ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ" ԳՐՔԷՆ

ԴԻՐԷ Ա. — Ի. Ժ. — Փորձաքիւններու գլխ կենտու վրայ:

Այսու հանդերձ փորձաքիւնները սեպ յոյժ օգտակար են, րեպէսեւ նեղացուցիչ ըլլան եւ ծանր. սով-նեհեւ մարդս անոնցմով կը խնարհի, կը մախրի և կը կրքուի:

Ամեն սուրբիւր շատ նեղաքիւններէ ու փորձաքիւններէ անցան եւ յառաջդիմութիւն ըրին:

Եւ անոնք որ յիշեցան փորձաքիւններու տակալ, վաստակեցան ու ինկան դասալիք:

Ձիւց կարգ մը աշխատանքներ, համ տեղ մը աշխատի ծածուկ, ուր ըլլան փորձաքիւնք կամ նեղաքիւնք:

ԵՐԶԱՆԿԱՅԻՇԱՏԱԿ ԱՆՏՈՆ ՊԵՏՐՈՍ Թ. ՀԱՍՈՒՆԵԱՆ ՊԱՏՐԻԱՐԳ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ

12 Օգոստոս 1913

Տէր Խմբագրապետ,

Հանձնեցի՛ք ներկայս հրատարակել Ձեր պատուական քերթին մէջ: Շնորհակալութիւն կանխաւ:

ԽՆԲԱՑԻ

Շատ անգամ լրագիրներ գովասանօք խօսեցան Անարատ Յղութեան Կարգի մայրապետաց Միաբանութեան եւ անոնց արդիւնաւոր աշխատութեանց մասին, արժանաւոր գովատներով գրեցին անոնց թէ՛ հոս ի Պոլիս եւ թէ՛ գաւառներու մէջ մեր հասարակութեան մատուցած գնահատելի ծառայութիւնները, սակայն բնաւ չյիշեցին անդուգական եւ բազմաբարձր անձ մը, հասարակութեան եւ ամբողջ նուիրապետութեան բարերարը, Պոլսոյ Աւագ Թեմի աշխատի եկեղեցիներ, կղերանոց, քահանայատուն, կաթողիկոսարան եւ այլ աշխատի նուիրական հաստատութիւններ կանգնող զիւցաղներ, այս է երջանկայիշատակ Պետրոս Թ. Հասունեան, Պատրիարք Տանն Կիլիկիոյ, որու առաքելաշնորհ աշխատութիւնները եւ անձնուիրութիւնները յայտնի են եւ արձանագրուած կը մնան մեր

հասարակութեան պատմութեան պատուաբեր էջերուն մէջ :

Ահա՛ վերեւ յիշուած եւ մեր հասարակութեան պարծանքն եղող Անարատ Յղութեան Միաբանութիւնն ալ իւր սուրբ կանոններովը նոյն անմահ Հասունեան Պատրիարքի մէկ հաստատութիւնն է , որուն պտուղները վայելած ժամանակ՝ մեր հասարակութիւնը պարտաւոր է օրհնել նաեւ հիմնադրին անունը , շնորհակալութեամբ վերջիշելու է անոր փառապանծ յիշատակը :

Եւ սակայն ցաւ ի սիրտ կը տեսնենք ընդհակառակը որ անոր անունն անգամ չյիշուիր . կարծես Պոլսոյ մէջ գտնուող իր բարեկամները , ծանօթները , ազգականներն իսկ մոռցեր են մեծահամբաւ Հայրապետին նուիրական յիշատակները , անխոնջ աշխատութիւնները , իր հասարակութեան նկատմամբ մուգած սէրը եւ անոր ըրած բարերարութիւնները : Եւրոպական ազգերու մէջ եթէ գտնուէր այնչափ չքնաղ ու չնաշխարհիկ յատկութիւններով օժտուած մէկը , կ'անմահացնէին զանիկա իրբեւ իրենց անկողնուտելի փառքն ու գանձը . եւ կը դառնար ան՝ թանկագին մէկ գոհարը իրենց ազգային պատմութեան : Ո՛րչափ հեռի ենք այսպիսի խոհուն , ազգապանծ , գոնէ անկողնակալ քաղաքակրթութենէ . որչափ հեռի ենք մոտաւորական ու բարոյական այդ բարձրութենէն . . .

Ընդհակառակն , զժառիտաբար , ժամանակին այդ դերապանծ անձն ալ չարաչար հալածուեցաւ , նախատուեցաւ ումանց կողմանէ . իրեն դէմ այնչափ զրպարտութիւններ գրուեցան նոյն ժամանակի լրագիրներուն մէջ եւ սպերախտութեամբ սեւ մրուրներ թափուեցան այն աշխարհածանօթ եւ անզուգական բարերարին դէմ : Մեր մէջ կարծես Մեծերը դատաւարտուած են անպատճառ հալածուելու՝ անզուսպ ամբարտաւանութիւնէ եւ զժողագրգիռ նախանձէ : Մեր պատմութիւնը կը վկայէ . ի կենդանութեան միշտ խոշտանգուած են մեր մեծ մարդերը , ինչպէս Ներսէսեանք եւ այլք , պաշտպանք աստուածային իրաւանց Ս . Եկեղեցւոյ :

Վսեմ . Հասունեան ալ կը պաշտպանէր

Եկեղեցւոյ անբռնաբարելի իրաւունքները յագուտ եւ ի բարգաւաճանու մեր հասարակութեան : Նախատեսելով Էջմիածնական Հայոց մէջ տիրող անիշխանութեան փեսայութիւնը , աշխատած էր կաթողիկէ սկզբունքներով տոգորել իր պատրիարքական իրաւասութեան ենթակայ ժողովուրդը , որ անշուշտ աւելի երջանիկ պիտի ըլլար եթէ ամբողջովին հետեւէր իր քարոզած սկզբանց , որոնց պաշտպանութեան համար նա՝ հրամանաւ եւ տրամադրութեամբ Ս . Աթոռին՝ տաանեութ տարի մարտիրոսացաւ հալածանօք եւ վիշտերով , եւ նախատուեցաւ Ս . Աթոռին դէմ ապստամբ խմբակի մը կողմէ :

Երախտագիտութեան ամենապարզ պարտաւորութիւնը կը ստիպէ ամէնքնիւ՝ Հասունեան Պատրիարքի բարեկամները , ազգականները , ծանօթները եւ ամէն ճշմարիտ հայ ուղղափառները օրհնութեամբ յիշել անմահ բարերարին անունը եւ հետեւիլ իրեն ուղղափառ սկզբունքներուն եւ գաղափարներուն , որոնք մեր հասարակութեան հիմը կը կազմեն եւ որոնց մէջ է միակ փրկութիւնը :

Ծերունագարդ այդ Հայրապետը , ագամանդեայ նկարագրի տէր , ուղղամիտ , ճշմարտապէս եկեղեցական ոգւով զարդարուած , Վեհապետներու իսկ մտերմութեան ու սքանչանքին արժանացած , աստուածասէր ու ճշմարիտ ազգասէր , հոգեւից , շրջահայեաց , ծանրաբարոյ , զթափրոտ այս Հայրապետը , խորթափանց այս հանճարը , անզուգական զարդն է մեր Հայ Կաթողիկէ հասարակութեան :

Յաւերթական օրհնութեամբ ըլլայ Անոր անմահ յիշատակը . . .

ԲԵՐՍԵՐ



ՄԱՐԻԱՄ Է ՄԱՅՐ ԻՄ

Մարիամ է մայր իմ.
Իճնպէս կրնամ չսիրել զինք.
Ջինք կը սիրեմ իր սիրով կ'այրիմ.
Թա՛ղ իմանան երկիր, երկինք.
Իր զուականերուն հետ մտերիմ
Իճնպէս կրնամ չսիրել զինք,
Մարիամ, Մարիամ է մայր իմ :

Մարիամ է մայր իմ.
Մի՛թէ կրնա՞յ չսիրել զիս.
Կը գրթայ վրաս երբ կը նեղուիմ,
Կ'առաջնորդէ դողալէ փայլիս,
Կ'ընկնէ քնամիս ծանօ, խերիմ.
Մի՛թէ կրնա՞յ չսիրել զիս
Մարիամ, Մարիամ է մայր իմ:

Մարիամ է մայր իմ.
Պիտի յիշեմ ես զինք միտ.
Իրեն սաճարիմ մէջ սրբանիմ
Կը փարսէ հոգ ցաւ ու վիտ,
Հոն պիտի միտ ես պաղատիմ.
Պիտի յիշեմ ես զինք միտ,
Մարիամ, Մարիամ է մայր իմ:

Մարիամ է մայր իմ.
Կ'երդնում սիրել զինքն յարմամ.
Ջինք մինչեւ ցուրտ ու սեւ շիրիմ
Պիտի պատեմ յօճառակամ,
Իրեն համակ պիտի գոռուիմ.
Կ'երդնում սիրել զինքն յարմամ,
Մարիամ, Մարիամ է մայր իմ:

Մարիամ է մայր իմ.
Ինքն ալ զիս միտ պիտի սիրէ.
Իր անուան վրայ կը վստահիմ.
Երբ սկսիմ ելլել երկրէ,
Ինքն անուցընէ պիտի մահ իմ.
Ինքն ալ զիս միտ պիտի սիրէ,
Մարիամ, Մարիամ է մայր իմ:

Թարգմ. ԽԱՉԻԿ Վ. ԱԹԱՆԱՍԵԱՆ

ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՀՌՈՍ ԵՒ ԿԱՅՈՂԻԿԷ ԱՇԽԱՐՀ

Օգոստոս 4ին, Պրոս Ժ. Ս. Քաճանայապետին ընտրութեան տասնեորդ տարեդարձն ըլլալով՝ քաճանայապետական դրօշը պարզուեցաւ Սուրբ-Գամառոսի պալատին վերեւը, և Զուիցերացի անձնապահները պղինձէ դուռը զարդարեցին իրենց գեղեցիկ դրօշակներով. սակայն Տրապարակական հանդէսներ տեղի չունեցան նշն օրը Վատիկանի մէջ, ինչպէս արդէն ծանօթ է Քաճանայապետին տարեդարձը կը տօնուի թագադրութեան տարեդարձին օրը, և այս տարեդարձը նոյեմբեր ամսուան յետագումն է:

* * Քաճանայապետը ընդունեցաւ 400 Գաղմատացի ուխտաւորներ, Անոնց ուղղեց սիրալիր խօսքեր, գովեց զիրենք որ եկած են անուշուր Կուսանդիանի յորիւհանը կաթողիկէութեան կեդրոնին մէջ, Անոնց յայտնեց իր գոհութիւնը Գաղմատիոյ մէջ կրօնքի, և յատկապէս Ս. Խարհուրդին ջերմեանդութեան ծաւալման մասին առած բարի լուրերուն համար:

* * Հոռմի Թրանայթեվէր թաղին մէջ վեհաշուք հանդէսով տեղի ունեցաւ Կարմեղոսի Տիրամօր անուշական թափօրը: Կը մասնակցէին 10,000է աւելի հաւատացեալք: Թափօրը սկսաւ առաւելուն ժամը 6ին և վերջացաւ 9ին: Գրեթէ բոլոր տուները զարդարուած էին: Կեցցէ՛ Մարիամ աղաղակները, ծափահարութիւնները կը հնչէին ամէն կողմէ երբ կ'անցնէր Տիրուհին պատկերը:

* * Թողտի Արքեպիսկոպոս կարդինալ Ալէր զրկեց Լիպանի Պէլլօ Պատրիարքին կարեւոր գումար մը իբրեւ նպաստ՝ Սպանիոյ եպիսկոպոսութեան կողմէ, Փորթուկալի եպիսկոպոսներուն աւերած ալ փանաքի ըլլալ մեր ընծան, կը զրէ Կարդինալը Լիպանի Պատրիարքին, կը յուստնէ թէ աւելի պիտի նայիք մեր զգացումներուն որ զմեզ կը ստիպեն այդ նպաստը ընելու քան այդ նպաստին որքանութեան: Վստահ ենք որ պիտի նկատէք այդ իբրեւ նշան մեր սիրալիր համակրութեան նկատմամբ ձեզի, մեր հաւատակից եղբայրներուն, որ քսաներորդ դարուն մէջ աշխարհի կ'ընծայէք առաջին դարերու քրիստոնէութեան օրոտայոյդ օրինակները:

Սպանիոյ եպիսկոպոսները այսպէսով հետեւեցան զեհ օրինակին Ս. Քաճանայապետին, որ արդէն զրկած է Փորթուկալի եպիսկոպոսներուն կարեւոր գումարներ:

* * Ս. Պետրոսի կալանաւորման և եւրոպեան եկեղեցւոյն տօնը կատարուեցաւ Օգոստոս 4ին:

Աւանդութիւնը այս եկեղեցւոյն սկզբնաւորութիւնը կը վերագրէ Ս. Պետրոսի. բայց պատմականորէն ոտուգուած է որ այս եկեղեցին հիմնադրուած է 133ին Միծն Լեւոն Քաճանայապետին օրով, Եւրոպեայի կայսրուհին կողմէ:

Եւգրքսիայի մայրը՝ Երուսաղէմ աւետի երթալով
հոն Պատրիարքէն պարգեւ ընդունեցաւ Ս. Պետրոսի
չղթան, որով կապուած էր նա Երուսաղէմի մէջ Հե-
րովդէսի հրամանով: Մեծն Լեւոն Ս. Քահանայա-
պետը, բաղդատեց այդ չղթան այն չղթային հետ,
որով կապուած էր Ս. Պետրոս Հռոմի մէջ Ներոնի
հրամանով, և տեսաւ թէ հրէական և հռոմէական
չղթաները միեւնոյն արհեստաւորի գործեր են: Կայս-
րուհին շինել տուաւ այն ատեն այս կաթողիկէն որ
չղթայապիր Ս. Պետրոսի տնունը կը կրէ՝ ի յիշատակ
հոն պահուած չղթաներուն:

Ս. Վերջերս Գերիէի Թագաւ թերթին կողմէ
անժայել կերպով զրպարտուած էր Ն. Վ. Տէրութիւ-
նը Կարգինայ Մաքիթի, Բեզայի արքեպիսկոպոսը և
Վատիկանի դիտարանին նախագահը:

Ն. Վատի. Տէրութիւնը գանգաւ ըրած ըլլալով,
նոյն թերթին պատասխանատու խմբագիրը, անորէն
և արտօնատէրը մեծ տուգանքի գատապարտուեցան
նախագատ ատենին մէջ: Բողոքեցին ասոնք վերա-
քննիչ ատենին, որ նոյնպէս գատապարտեց զԻրենք:
Զրպարտութեան հեղինակ խմբագրապետը գատա-
պարտուեցաւ երեք ամիս և հինգ օր բանտարկու-
թեան, և 1890 թր. տուգանքի Տնօրէնն ալ նոյն
պատժին գատապարտուեցաւ միայն թէ իր տուգանքը
1820 թր. է:

Արտօնատէրը յայտարարուեցաւ երաշխաւորաբար
պատասխանատու առեգանքներուն և գատապարտ-
ութեան ծախքերուն:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ

Ս. Քահանայապետին մատարանապետ Գ. Յովհան-
նէս Պրէսան կը ծանուցանէ Ամեն. Հոգեւոր Տէրոջ
թէ Ս. Քահանայապետը շատ գոհ քաջած ըլլալով
Առաք Թեոփ տարեկան կրթութենէն՝ բոլոր սրահն
կը ընտրէ իւրաքանչիւրին իր աւագելական օրհնու-
թիւնը:

Ս. Հոգեւոր կրթութիւններէն վերջը Ամեն. Հո-
գեւոր Տէրը նկատի առնելով Գեր. Կ. Վ. Պատու-
հասեանի բարի տրամադրութիւնները, հաճեցաւ
անուանել զինքը հոգաբարձու Քաղկեդոնի Ս. Լեւոն
եկեղեցւոյ:

Ս. Օգոստ. 12ին Կաթողիկոսարանի սրահին մէջ
գումարուեցաւ Կրօնական Ժողովը և զբաղեցաւ կա-
րէւոր խնդիրներով:

Ս. Այսօր Կ. Պատրիարքական փոխանորդը Նի-
կոսիդէս պիտի մեկնի ընկերակցութեամբ Գեր. Ռա-
փայել Վ. Էքմէքճեանի, որպէս զի վաղը նոյն տեղ-
ւոյն Յիսուս-Փրկիչ եկեղեցւոյ հիմնարկութեան հան-
դէսը կատարէ:

Ն. Արհիպատուութիւնը՝ հիմնաքարերու մէջ
դնելու համար հետը պիտի ատնի մասունքները Ս. Ս.
Պետրոսի, Բարթողիմէոսի, Պողոսի, Թադէոսի, Ան-

դրէասի, Փիլիպոսի, Լուսաւորչի. Յակոբոս Զերեզ-
եայ, Թովմայի, Յակոբոս Ալփեայ, Մատթէոսի, Յով-
հաննու, Մարկոսի, Ղաւկասու, Սիմոն Կանանացւոյ
և Մատթիայի:

Ամենապատեւ հոգեւոր Տէրը Յիսուս Փրկիչն ու-
մենաառաքը որոնի պատկերը յօրինել առաջով պիտի
նուիրէ նոյն եկեղեցւոյն:

Ս. Պիէճիկի Ժողովրդապետ Գեր. Յովսէփ Վ.
Պարիկեան և Պանարմայի Ժողովրդապետ Մկրտիչ Վ.
Մուրասեան, որ հոգեւոր կրթութեան համար Պոլիս
եկած էին գարնան իրենց պաշտօնավարերը:

Ն Ե Ր Ք Ի Ն Գ Ո Ր Ծ Ե Ր

Օգոստ. 7ին, մեծ տէրութեանց Կ. Պոլսոյ դե-
պանները, իրենց կառավարութիւններէն վերջնական
հրահանգներ ստացած ըլլալով, դատ զատ գիծում
ըլին Բ. Դրան հետեւեալ կերպով.

«Վերցնակաւորէն պատժ ստացայ իմ կառավա-
րութենէ հրաւիրելու Օսմ. կառավարութիւնը որ յարգէ
Լոնտոնի Դաւանագրին մէջ դրուած սկզբունքներ եւ յա-
կապէս անոր Էնոս-Միսիա գծին վերաբերեալ պայման-
ները:

Ինչպէս հրաման ունիմ յայտարարելու թէ՛ նոյն
սահմանին գծման միջոցին, Տէրութիւնները պատաս-
են նկատի առնելու այն պայմանները զորոնք Օսմ. կա-
ռավարութիւնը կարեւոր պիտի դաժէ առաջարկել:

Ս. Օգոստոս, 11ին գեսպանական ընդունելութեան
օր ըլլալով, մեծ տէրութեանց ներկայացուցիչները
էին օրէ ետք ժամը Յաւկէսին Բ. Դուռը եկան և ա-
յցելեցին Եպարքոսին, որ Օսմ. կառավարութեան պա-
տասխանը հաղորդեց անոնց բերանացի կերպով: Դե-
պանները զատ զատ եկան Բ. Դուռ և ապաման սը-
րահն առաջնորդուեցան: Նոյն Ռուս դեսպանը ներ-
կայացաւ Սալիմ Հալիմ փաշայի, յետոյ կարգաւ ներ-
կայացան Աւստրիական և Գերմանական գեսպանները,
Անգլ. գեսպանաւան գործակատարն և Իտալական
գեսպանը: Եպարքոսն իւրաքանչիւր գեսպանի առջև
առանց յառաջարանի կարդաց Բ. Դրան պատասխա-
նը, որ գրուած էր անստորագիր թուղթի վրայ և յե-
տոյ ընթերցանակալ պատճենները յանձնեց: Ընթեր-
ցումը տեւեց 10 րոպէս փայլեան: Դեսպանները Ե-
պարքոսին պատասխանը լսելէ ետք, դուռն ելան և ա-
ռանձին առանձին մեկնեցան իրարմէ քանի մը վայր-
կեան տարբերութեամբ: Չրանս. գեսպան Մ. Պոմ-
բուս Թարապիսի ամարանցին հրկիզման տաթիւ
կարգ մը գործերով զբաղած ըլլալուն համար նոյն օրը
չկրցաւ Բ. Դուռը գալ: Այս պատճառաւ պատասխա-
նը մասնաւոր պաշտօնատարի մը միջոցաւ հաղորդուե-
ցաւ անոր:

Դեսպանները Բ. Դուռնէն մեկնելէ ետք ան-
միջապէս իրենց կառավարութեանց արտօքին գործոց
նախարարներուն հետաքրեցին Թուրքիոյ պատաս-
խանը:

Ահաւորել Բ. Դրան պատասխանին պատճէր.
Պատասխանելով այն յայտարարութեան, զոր ձեռ
վսեմութիւնը հանեցաւ ընել ինն իւր կառավարութեան
անունով, կը փութաւ ծանուցանել իրեն թէ Կայս. կա-
ռավարութիւնը, ամէն նկատմամբէն անկախաբար, միե-
ջանացած է համակերպիլ Լոնտոնի դաւանագրով հաս-
տատուած սկզբունքներուն: Այսու ամենայնիւ եթէ է-
նոս—Միսիա գծին վերաբերեալ տրամադրութիւնը չէ
կրցած յարգել, ինչպէս յարգած է նոյն դաւանագրին միւս
տրամադրութիւնները, պատճառն այն է որ Կայս. կա-
ռավարութիւնը միջամտելու հարկեցուցիչ է ստիպողա-
կան պարտաւորութեան մէջ զգնուած է արգիլելու հա-
մար սխալմամբի բնաջնջումը ժողովրդոց, որոց միակ
յանցանքն էր էնոս—Միսիա գիծէն անդին զգնուիլ: Իսկ
այսի, ո՛չ նուազ հարկեցուցիչ պարտաւորութեան մէջ
կը զգնուի ապահովել սահմանադրիւի գիծ մը, որ կա-
րենայ երաւարտորել մայրաքաղաքին եւ ներդրուելուն
ապահովութիւնը եւ հետեւապէս կարելի ըլլայ յնական
եւ տեւական յարաբերութիւններ հաստատել դրացի պե-
տութեանց հետ. իսկին շնորհակալութեամբ կը դիտեմ թէ
ձեռ վսեմութիւնը իւր յայտարարութեան մէջ կ'ընդունի
այս վերջին անհրաժեշտութիւնը, զի այսոր մէջ կը տես-
նեմ Կայս. կառավարութեան գծած սահմանադրիւի գիծը
միակն է որ կարենայ յաջնել բաղձազուած ապահո-
վութեան եւ տեւականութեան պայմանները:

Մ Ի Զ Ա Զ Գ Ա Յ Ի Ն

Օգոստոս 10ին Պուլքէշի մէջ կ'ընտան Տաշտու-
թեան հետեւանքով պատերազմիկները ըստ կարի փու-
թով պիտի ջրուեն իրենց բանակները:
Այս դաշնագրով Սերպիա եւ Յունաստան ռազ-

մարտական մեծամեծ արգիւնքներէ յատ Տաշտու-
թեան տառաւորութիւններ շահեցան: Լոնտոնի զաշտու-
թիւն արտադրութեամբ թուրքիա 165,000 քառ. քի-
լոմէթը տեղ կորսնցուցած էր, առանց Տաշտութեան Ար-
քիպէղագոսի կղզիները: Պուլկարիա այսօր կը ստա-
նայ Սելանիկի նահանգին կէտէն քիչ մը աւելի, իբր
45,000 քիլոմ., եւ Էտրիքէի նահանգին մէկ մասը: Եթէ
Լոնտոնի դաշնագիրը յարգուէր, Պուլկարիա պիտի
շահէր 46,000 քիլոմ., որմէ պէտք է զեղչել Ռուսիայ
թողուած 8,000 քիլոմ.: Պուլկարիա ցարդ ունէր
96,345 քիլոմ. տարածութիւն մը: Առանց Էտրիքէի եւ
Քըրք Քիլիսէի, Պուլկարիա պիտի ունենայ 119,000
քառ. քիլոմ. տարածութիւն մը: Յունաստան կը ստա-
նայ Սելանիկի, Մանասթըրի եւ Եաննայի նահանգնե-
րուն կէտէն Կրետէի ալ Տաշտութեան, Յունաստան 45,000
քիլոմ. կ'ընդարձակուի: Մինչեւ հիմայ ունէր 64,679
քիլոմ., որով այժմ կ'ունենայ 110,000 քառ. քիլոմ.:
Սերպիա կը ստանայ Գոսովայի նահանգին մեծ մասը, իբր
48,000 քիլոմ. որ իր ունեցած 48,303 քիլոմ. վրայ ա-
ւելնալով կ'ըլլայ 95,000 քառ. քիլոմ.: Ռուսիա ու-
նէր 131,353 քիլոմ.: Այժմ պիտի ունենայ 139,000:
Ընդարձակութեան կարգով տառաջիկը կ'ըլլայ Ռու-
սիան: Յետոյ կու գան Պուլկարիա, Յունաստան եւ
Սերպիա: Ամենէն աւելի Տաշտութեան եղաւ Սերպիա:
Յետոյ կու գան Պուլկարիա եւ Յունաստան:

*. Ռուսիա եւ Աւստրիա կը պահանջեն որ Պուլ-
քէշի դաշնագիրը վերաքննութեան ենթարկուի, եւ
Քաովալա նաւահանգիստը Պուլկարիայէն թողուի:

*. Մակեդոնիոյ մեծ մասին Սերպիոյ եւ Յունաս-
տանի թողուիլը իրատ դառն ապաւորութիւն գործեր
է Պուլկարիոյ հանրային կարծիքին վրայ: Մեծ տե-
րութիւնները եթէ չփոխեն Պուլքէշի Տաշտութեան
դաշնագիրը, չի կարծուիր որ Պուլկարիայէն երկար ա-
տեն հանգիստ մնան:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Դեպքեր եւ սկզբունքներ	513
Հրաւարած Աստուածամոր Կուսին պատկեր	516
Սիրեանի Ժազգայի Բաբելոնի վէ իբի Արեւայ. յարն գաթոյի մէկնային գապովիլի	518
Սերպիոյ Կուսին վերափոխումը	520
Եօթնեակ Բիւսոնէի	523
Երջանկայեացակ Անտոն Պետրոս Թ. Հասունեան	524
Մարիամ է մայր իմ	526
Տեղեկագրական	526

ԱՐՏՈՆԱՏԷՐ

ՅՈՎ. Մ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏՆՕՐԷՆ-ԽՄԱՎՐԱՊԵՏ

ԳԵՈՐԳ Մ. ՎԱՐԴ. ԹԵՐԶԻՊԵՏԱՆ

Տպագր. Կ. Ա. Բազանց Զաքարեայի, Բերա, Կայսրական փողոց թիւ 5, Կ. Պոլիս

Երանելի Տէր Կոմիտաս Քահանային վարքը, առանձին
հրատարակուեցաւ ընտիր թուղթի վրայ, մաքուր տպագրու-
թեամբ և՛ երեք պատմական պատկերներով:

Փափաքելի է որ ամէն Հայ Կաթողիկէ ունենայ այս գե-
ղեցիկ մատենիկը, որուն միակ նպատակն է ծանօթացնել ամէ-
նուն Երանելի նահատակին գերազանց բարեմասնութիւնները, և,
անոր ջերմեռանդութիւնը ծաւալելով, հրաւիրել ամէնուն վրայ
անոր բարեխօսութեան անզուգական արդիւնները:

Գիւն 5 դանեկրան, Էջ 144 ստուր քոթակագր

Գրքոյկիս երեք պատկերները: 1. Տէր Կոմիտաս քահանա-
յական զգեստով և իր շիրիմը: 2. Տէր Կոմիտաս դատաւորին առ-
ջև, 3. Գլխատումը, առանձին ալ կը ծախուին. մեծաքանակ գը-
նողներու, գոհացուցիչ գեղջ:

ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՏՄԱՆՆԵՐ. — Տարեկան համաժողովի 40 հինգ արծ. վեցամսեայ՝ 20. —
մէկ թիւ՝ 1 հինգ: — Արամսահմանի՝ տար. ճր. 10. վեցամս. 5. — Լեւոնուհի կանխիկ են:
ՀԱՍՏԻ. — Կարողիկե Արմազանի, Թերա, 5 Պայրամ փողոց՝ 5, Կ. Պոլիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Bairam 5

Constantinople

ՄԱՆՈՐՈՒԹՅԱՆ. — 1. — Յարգանք կը նմանաւորուի ճարտար օրեր: 2. — Խմբագրութիւնս պարտա-
ւորեալ չէ պէտքստեալ կամ նայել թաւաք նպատակի իրեն զրկուած ց եւ է յօդուած: 3. — Կեդրոնացում զրկուած
յօդուածներու հեղինակը կը պարտի իր խնայական տնուկը ծանուցանել խմբագրութեան: 4. — Չեռագիրներ եւ չեն
գարձաւիր: 5. — Յօդուածներու ձեռագիրներ պէտք է գրեալով իրեն թուղթին մէկ կողմը միայն: 6. — Մանու-
կանց համար մասնաւոր պայմանագրութիւն կը կատարուի: 7. — Հասցէի փոփոխութեան համար պէտք է անհրա-
ժեշտ երկու դանկով ծանուցանուի ի միասին զգիլ:

ՏԳՆՈՒՄ. — Կարողիկե Արմազանի Թերա, 5 Պայրամ փ. 5: Տպարանս բոլոր անհայտի հոսիս ի վիճակի է
որ եւ իցէ սպաւառան գործոց հոսիս: Կը սպասին ամեն ծեսակ ծանուցումներ, գիրքեր, տերներ, հրաւիրագիրներ,
խաղեր, բարդատեսներ, մանուկներ, երգեր, եւն.: Դիմելու պահանջի իրար զով պիտի կեն Գեղեցկագիտական հա-
ճակի եւ տպարանի մատուցանել կողմանէ յանձնարարներ անհարկոյն զոն պիտի մնան:

ԿԸ ՄԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅԱՆ ՍԿՐՈՒՄ ԲԵՐԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՄ. — Կանխապէս համաձայն էլեղեցական իշխա-
նութենէ եւ կիրառութիւնը համայնեալ: Բաղկացած է 136 էջերէ Դիմ, պատկեր, քաղաքագիր, 2 հինգ: